«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ «Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը»

Դաստիարակ՝ **Լուսինե Նազարյան Ռազմիկի**

Մանկապարտեզ՝ **«Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի թիվ 1 մանկապարտեզ » ՀՈԱԿ**

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ՍԱՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 4

1. 1. **Սաների ինքնուրույնության և նախաձեռնողականության ունակությունների զարգացման անհրաժեշտությունը** 4

1. 2. **Սաների մեջ նախաձեռնողականության զարգացման ուղիները** 5

1. 3. **Սաների ստեղծագործական մտածողության ձևավորումը** 7

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ 9

2. 1. Պարապմունքի պլան 9

2. 2. Հետազոտության ընթացք 11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գրականության ակնարկ: Նախադպրոցականների ուսուցման գործընթացում մեծ դեր ու նշանակություն ունի նրանց ինքնուրույն գործունեության կազմակերպումը, քանի որ ողջ կյանքի ընթացքում սաների ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները[1]: Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ նախաձեռնողության և ստեղծագործական մտածողության զարգացումը կրթության հիմքերից մեկն է, որը զարգանում է նախադպրոցական տարիքի տարբեր փուլերում: Քանի որ ժամանակակից աշխարհում շատ կարևոր են խնդիրների լուծման կրեատիվ և արտասովոր ձևերը, ուստի աճում է այն մարդկանց պահանջարկը, ովքեր կարող են մտածել ստեղծագործաբար: Ապագայում հաջողակ լինելու համար շատ կարևոր է հնարավորինս շուտ զարգացնել մտածողության ինքնատիպությունը, և այդ ժամանակ կյանքում հաջողության հասնելու ավելի շատ հնարավորություններ կլինեն[2]:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացման մեթոդների ուսումնասիրումը, ինչպես նաև բացահայտել գործնականում դրանց կիրառման արդյունավետությունը:

Աշխատանքի կառուցվածքը: Սույն հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, 1 տեսական և 1 գործնական գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

---

[1] Парамонова Л.А., Арушанова А.Г., Алиева Т.И. и др. Методические рекомендации по организации образовательной работы с детьми 3-4 лет. / Под ред. Парамоновой Л.А. М.: ОлмаМедиаГрупп, 2015. – 96 с, с. 26.

[2] Бабич, О.М., Вьюнова Н.И., Гайдар К.М. Развитие творческих способностей у старших дошкольников / О.М. Бабич – М., 2003. 41с, с. 13.

ԳԼՈՒԽ 1. ՍԱՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1. 1. **Սաների ինքնուրույնության և նախաձեռնողականության ունակությունների զարգացման անհրաժեշտությունը**

Երեխան ունի իր առանձահատուկ տեսնելու, մտածելու և զգալու ունակությունները, ինչպես նշում է Ժ. Ժ. Ռուսոն՝ չկա ավելի հիմար բան, քան փորձել փոխարինել դրանք մեր ունակություններով: Ինքնուրույնությունը, սեփական կյանքը կազմակերպելու, սեփական հոգևոր ու մտավոր հնարավորությունները գիտակցելու, գնահատելու և ըստ այդմ իր զարգացման ուղին ընտրելու մարդու ընդունակությունն է:

Երեխայի ինքնուրույն գործունեությունը սկսում է ձևավորվել դեռևս վաղ մանկության շրջանում, որն արտահայտվում է նախաձեռնողականությամբ, քննադատությամբ, իր գործունեության համար անձնական պատասխանատվության զգացումով և որոշակի նպատակներ դնելու և ինքնուրույն հասնելու կարողությամբ[3]: Ընդհանուր տեսակետներից մեկն այն է, որ անկախությունը համարվում է մտածողության զարգացման ամենաբարձր մակարդակը, որը բնութագրվում է օբյեկտիվորեն կարևոր խնդիր տեսնելու և այն լուծելու ունակությամբ (այսպես են կարծում Բ. Մ. Թեպլով, Ս. Լ. Ռուբինշտեյն, Ա. Ա. Սմիրնով, Մ. Ի. Զաբոլոտն և շատ ուրիշ հեղինակներ):

Ուսուցման գործընթացում, կրտսեր նախադպրոցական տարիքից սկսած, մինչև ավագ նախադպրոցական տարիք սաներին պետք է սովորեցնել աշխատել ինքնուրույն: Երեխայի ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դրսևորվում տարիների ընթացքում, այնուհետև դպրոց հաճախելուց հետո կատարելագործվում դասարանից՝ դասարան: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց, այն նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը: Աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ.

[3] Кирпач, А. А. Развитие инициативы и самостоятельности детей дошкольного возраста в изобразительной деятельности / А. А. Кирпач. — Текст : непосредственный // Аспекты и тенденции педагогической науки : материалы III Междунар. науч. конф. (г. Санкт-Петербург, декабрь 2017 г.). — Санкт-Петербург : Свое издательство, 2017. — С. 48-50.

- ✓ Ճիշտ և պարբերաբար կազմակերպված ինքնուրույն աշխատանքի արդյունքում սաներն առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում, քան այն դեպքում, երբ դաստիարակն ինքն է մշտապես պատրաստի գիտելիքներ մատուցում:
- ✓ Ինքնուրույն աշխատանքի շնորհիվ նորը ճանաչելու ցանկություն է առաջանում, սա նպաստում է ինքնակրթության և ինքնակատարելագործման զարգացմանը:
- ✓ Ժամանակի ընթացքում ուսուցման ժամանակ ինքնուրույն աշխատանքի պարբերաբար կազմակերպումը նպաստում է սաների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:
- ✓ Ինքնուրույն աշխատանքի անցկացումն արագացնում է սաների գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը:

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում, ուստի անհրաժեշտ է նախապես մշակել դասի պլանը, ընտրել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Ընդ որում, դաստիարակը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սաներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին: Ինչպես նշում է Լ.Ս.Վիգոտսկին 5 տարեկանի շեմին տեղի է ունենում երեխայի «զգացմունքների իմաստավորում (ինտելեկտուալիզացիա)», և նա ընդունակ է դառնում բացատրելու սեփական ապրումները, հասկանալու դիմացինի հուզական վիճակն ու զգացմունքները: Դաստիարակության խնդիրներն այս տարիքում հիմնականում ուղղված են երեխայի սեփական փորձի ձեռբերմանն ու իմաստավորմանը, այն է ներքնայնացմանը:

1. 2. **Սաների մեջ նախաձեռնողականության զարգացման ուղիները**

Նախաձեռնողականությունը երեխայի համար չափազանց կարևոր հատկանիշ է, և մեր կարծիքով, այդ որակի դաստիարակությունը մեծապես կախված է դաստիարակի

գործունեությունից, քանի որ հենց նա պետք է դաստիարակի երեխայի բարոյական և կամային հատկությունները: Շատ ուսուցիչներ և գիտնականներ, ինչպիսիք են Տ.Ս. Բորիսովան և Է.Պ. Իլյին անհատականության այս հատկությունը նրանք վերագրում են բարոյական-կամայինին[4]:

Նախաձեռնությունն արտահայտվում է կամավոր գործունեությամբ, աշխատանքի նկատմամբ ստեղծագործ վերաբերմունքի և վարքի հաստատված ձևերի: Նախաձեռնությունը սոցիալական կարգապահության անբաժանելի մասն է, սա սանի և մյուս երեխաների հետ նրա փոխազդեցության այն կողմն է, որտեղ ակտիվ սկզբունքը անհատն է: Նախաձեռնության չափը, որը դաստիարակը կարող է զարգացնել սաների մեջ, ցույց է տալիս, թե որքանով է այն իրական նախադրյալներ ստեղծում անձի ազատության համար և նպաստում մարդու անհատականության ձևավորմանը[5]:

Նախաձեռնողական վարքագծի զարգացման համար անհրաժեշտ պայման է երեխայի դաստիարակությունը զարգացող, ոչ ավտորիտար հաղորդակցության պայմաններում: Սիրո, փոխըմբռնման, հանդուրժողականության և գործունեության կարգուկանոնի սկզբունքների վրա հիմնված մանկավարժական հաղորդակցությունը կարող է երեխայի ազատության և անկախության լիարժեք զարգացման համար դրական և կարևոր նախապայման դառնալ: Նախաձեռնությունը պահանջում է մեծահասակների բարյացակամ վերաբերմունքը, որոնք պետք է անպայման աջակցեն և զարգացնեն անհատականության այս արժեքավոր գիծը: Նշենք, որ երեխայի նախաձեռնությունը կարող է արգելափակվել, եթե ծնողները, դաստիարակները թույլ չտան նրան ինքնուրույն գործել, եթե անընդհատ ու չափից դուրս պատժեն: Երեխաների զգալի մասի մոտ պատիժն առաջացնում է մեղքի զգացում, որը կարող է խանգարել հետաքրքրասիրության, նախաձեռնողականության և կամայականության զարգացմանը: Երեխան սկսում է զգալ իր անարժեքությունը, նա չունի վճռականություն՝ տեր կանգնելու

[4] Сентемова К. С. , Воспитание инициативности у младших Школьников в процессе коллективной Творческой деятельности, Пермь, 2016, 132с., 4с.

[5] Рыбкина, О.В. Влияние личностных особенностей детей младшего школьного возраста на школьную мотивацию/ Рыбкина, О.В.// учебнометодический портал - «Педагогический мир» - 2011 – с. 26-29.

իրեն, կախվածության մեջ է ընկնում ծնողներից և հասակակիցներից, ինչը հետագայում կարող է հանգեցնել խոր անձնական փոփոխությունների[6]:

1. 3. **Սաների ստեղծագործական մտածողության ձևավորումը**

Դեռ վաղ հասակից երեխայի անձի ինտելեկտուալ և ստեղծագործական զարգացման միջև առկա է էական տարբերություն: Գոյություն ունեն սկզբունքորեն տարբեր երկու տեսակի օժտվածություններ. յուրացված կամ «ուսումնական» և ստեղծագործական:

- ✓ «Ուսումնական» օժտվածությունը ենթադրում է սեփական մոտեցման բացակայություն և կապված է սանի ինտելեկտուալ զարգացման, այսինքն՝ հիշողության ու տրամաբանական մտածողության վարժանքի հետ:
- ✓ Ստեղծագործական օժտվածությունն այլ է: Ստեղծագործելու համար միայն ինտելեկտը բավարար չէ: Ստեղծագործող անձը պետք է գործի անորոշության պայմաններում, իմաստավորի ու վերաիմաստավորի իր գործողությունները, ոչ կաղապարային լուծումներ որոնի՝ հաճախ կռահմամբ և կանխագուշակմամբ, հաղթահարի դժվարությունները՝ նույնիսկ հիասթափության և անելանելության զգացման ի հայտ գալիս: Այդ բոլորը նա անց է կացնում իր և աշխարհի սեփական ընկալման միջով:

Մանկավարժները և հոգեբանները ստեղծագործելը դիտարկում են որպես անձի զարգացման կարևորագույն մեխանիզմ: Քանի որ նախադպրոցական տարիները անձի կայացման տարիներ են, ապա դաստիարակի գլխավոր խնդիրը սաների ստեղծագործ անհատականության ձևավորման համար պայմաններ ապահովելն է: Հայտնի է, որ ստեղծագործումը ձևավորվում է գործունեության մեջ: Հարց է առաջանում, թե ինչպե՞ս կառուցել սաների ուսումնական գործունեությունը, որպեսզի առավելագույնս բացահայտվեն նրանց ստեղծագործական ընդունակությունները: Սաների ստեղծագործական մտածողության հաջող զարգացման կարևոր պայմանը մտածելու

[6] http://galinamonina.ru/formirovanie-iniciativnostisamostoyatelnosti-otvetstvennosti-doshkolnikov/, 20. 11. 2023թ.

ընդհանուր մշակույթի առկայությունն է, այդ պատճառով ուսումնական գործունեությունը դասերին ուղղվում է, առաջին հերթին, սովորողի ինտելեկտուալ ունակությունների զարգացմանը. կարողանալ վերլուծել, սինթեզել, գտնել պատճառահետևանքային կապերը, ընդհանրացնել, եզրահանգել, դասակարգել, համեմատել և այլն: Բացի դրանից, ուսումնական ստեղծագործական գործունեությունում օգտագործվում են այնպիսի ինտելեկտուալ ընդունակություններ, ինչպիսիք են հետաքրքրասիրությունը՝ զգայունությունը շրջակա աշխարհի հիմնախնդիրների նկատմամբ, մտքի արագությունը և ճկունությունը՝ անցումը մի գաղափարից մյուսին, մտածելու յուրահատկությունը, ասոցման (ունակություն՝ գտնելու անալոգներ այնտեղ, որտեղ ավանդաբար դրանք չեն դիտարկվում) հեշտությունը:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

2. 1. Պարապմունքի պլան

Հետազոտության իրականացման համար մշակվել է պարապմունքի պլան, ընտրվել է ինտեգրված ուսուցման մեթոդը: Ընտրված թեման է «Աշնանային բարիքներ»: Պարապմունքի պլանը համառոտ ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Պարապմունքի պլան

Պարապմունք	Խումբ	Թեմա	Տևողություն
Ինտեգրված, խոսքի զարգացում և նկարչություն	Ավագ	«Աշուն» «Աշնանային բարիքներ»	2 պարապմունք
Նպատակ Կրթական:	Ձևավորել ընդհանուր պատկերացում աշնան մասին, -ձևավորել մտքերն ինքնուրույն արտահայտելու, հարկ եղած դեպքում ձեռք բերած գիտելիքներն օգտագործելու կարողություն, երեխաների մոտ նախաձեռնողականության կարողությունների զարգացում:		
Զարգացնող:	Զարգացնել վերլուծական մտածողությունը, ուշադրությունը և հիշողությունը: Ճշգրտել երեխաների տպավորությունները մեր գյուղի աշնանային տոնակատարությունների վերաբերյալ, ինչպես նաև նրանց մասնակցությունը աշնանային տնային աշխատանքներում:		
Դաստիարակչական:	Դաստիարակել սեր հայրենի բնության նկատմամբ, սովորեցնել պահպանել բնությունը, սեր դեպի գյուղը:		
Բառապաշարի հարստացում	Իրականացնել ոսկե, գույնզգույն, նախշուն, ամպամած, վարդագույն, դեղնահեր, բարեբեր, բազմագույն, գունագեղ, անձրևոտ, բերքառատ, դարչնագույն, մանուշակագույն, ոսկեհեր բառերի ուսուցումը:		
Թեմային վերաբերող նյութերի հավաքում	• Ա4 թղթեր, վրձին, ջրաներկ, մրգերի և բանջարեղենի քարտեր (կիսված վիճակում):		
Մեթոդներ	• Անհատական, զույգերով, խմբերով:		
Ընթացքը			
Խթանման փուլ	Երեխաները նստում են սեղանի շուրջ, դաստիարակը բաժանում է 4 խմբերի՝ յուրաքանչյուր խմբում 4 սան: Խմբերին դաստիարակի կողմից տրվում է հանելուկներ՝ աշնան թեմայով:		

Իմաստի ընկալման փուլ	Թեմայի վերաբերյալ գիտելիքների ամրապնդում: Արտասանում են Հ. Թումանյանի «Աշուն» ոտանավորը, երգում «Ջա՜ն, ջա՜ն, աշուն է» երգը:
Դիդակտիկ խաղ	«Գտի՛ր կեսը»: Բնութագրում ենք մրգերը և բանջարեղենները, գույները և համերը:
Կշռադատման փուլ	Ստեղծագործում են խմբերում, պատմում աշնան և աշնանային բարիքների մասին, Թեմայի ամփոփում, հարցերի և երկխոսության միջոցով ամրապնդվում են գիտելիքները:
Հարցեր	Ինչպիսի՞ն է աշունը, բնութագրեք Ձեր բառերով: Աշնան ամիսները որո՞նք են: Աշունը ինչո՞վ է տարբերվում մյուս ամիսներից: Ի՞նչ գույներ ունի աշունը: Ի՞նչ նվիրեց մեզ աշունը: Ի՞նչ բանաստեղծություններ գիտեք աշնան մասին:

2.2. Հետազոտության ընթացք

Հետազոտական աշխատանքի շրջանակներում իմ կողմից իրականացվել է «Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի թիվ 1 մանկապարտեզ » ՀՈԱԿ-ի սաների հետ փորձարարական ուսումնասիրություն, որի նպատակն էր զարգացնել մանկապարտեզի ավագ խմբի սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակություններ: Հետազոտությանը մասնակցել է մանկապարտեզի 16 սան՝ 9 աղջիկ և 7 տղա: Հետազոտական աշխատանքն իրականացրել ենք ինտեգրված ուսուցմամբ, ընտրվել է «Աշնանային բարիքներ» թեման:

1-ին փուլ: Ընտրել եմ «Աշնանային բարիքներ» թեման, քանի որ դրսում աշուն էր, ինչպես նաև նախապատրաստել եմ համապատասխան դիդակտիկ նյութերը (մատիտներ, սոսինձ, գունավոր թղթեր, ջրաներկ, վրձին, դիդակտիկ պաստառներ, մրգեր, բանջարեղեն և այլն): Այնուհետև ուսումնասիրել եմ համապատասխան գրականություն թեմայի առավել արդյունավետ ուսուցման նպատակով:

2-րդ փուլ: Երկրորդ փուլում ըստ պլանի իրականացվել են աշխատանքները: Նախադպրոցական տարիքի երեխաների մեջ անհրաժեշտ է սերմանել և մշակել այնպիսի որակներ ու հատկություններ, ինչպիսիք են՝ հետաքրքրասիրությունը, անմիջականությունը, երևակայությունը, ստեղծագործական մտածելակերպը, զարմանալու, աշխատանքից գեղագիտական հաճույք ստանալու սովորույթը և նախաձեռնողականությունը: Ճիշտ է, ասում են, որ բոլոր երեխաները այս կամ այն չափով օժտված են այս հատկանիշներով, սակայն դրանց անընդհատ զարգացումն ու կատարելագործումը դաստիարակի առաջնային խնդիրներից է, որոնք պետք է լուծվեն սովորելու ընթացքում: Թեմատիկ ուսուցումն ապահովում է երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը: Բազմակողմանի զարգացած, ուսման մեջ հաջողակ երեխաները մեծանում են հոգատար, աջակցող միջավայրում: Այդպիսի մթնոլորտը զարգացնում է երեխաների մտավոր և լեզվական ունակությունները և

ինքնավստահություն ներշնչում նոր ձեռք բերվող գիտելիքները կիրառելու համար: Դա է պատճառը, որ խիստ կարևորվում է ինտեգրված պարապմունքների անցկացումը:

Պարապմունքի ընթացքը՝ ԽԻԿ համակագով:

Խթանման փուլ- **Փուլի նպատակն է նյութի վերաբերյալ բացահայտել սաների գիտելիքները, քննարկվելիք նյութի մեջ ներգրավելով ակտիվացնել նրանց, սաների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում: Այս փուլում նպատակահարմար եմ համարել կիրառել խմբավորման մեթոդը: Այս փուլը սովորաբար տևում է** 3-5 **րոպե, որի ժամանակ երեխաներին տալիս եմ հանելուկներ: Քանի որ** 16 **սան են, ուստի նրանց բաժանում եմ** 4 **խմբերի, հաշվելով** 1-**ից մինչև** 4, **ձևավորում ենք խմբերը, որից հետո իրենք ընտրում են իրենց խմբերին բնորոշ անուններ՝ աշնան թեմայով: Երեխաներն ընտրեցին մրգերը:**

Աղյուսակ 2. **Խմբերին ուղղված հանելուկները**

Խմբի անունը	**Հանելուկ**
Խումբ 1. **Նուռ**	**Ձեռքեր չունի, Ներկեր չունի, Դաշտն է ներկում, Հազար գույնի:**
Խումբ 2. **Խնձոր**	**Գույնզգույն է, բայց ծիածանը չէ, Թափվում է, բայց անձրևը չէ:**
Խումբ 3. **Տանձ**	**Այն ի՞նչն է, ի՞նչը, Գարնանը կանաչում է, Աշնանը դեղնում:**
Խումբ 4. **Խաղող**	**Այն ի՞նչն է, ի՞նչը, Ամբողջ ամառ շողում է, Աշնան ցրտից դողում է:**

Բոլոր խմբերն ակտիվորեն մասնակցեցին հանելուկ-խաղին, շատ արագ գտան պատասխանները, որից հետո խմբերին առաջարկում եմ նկարագրել նախորդ օրվա ու այսօրվա եղանակները: Երեխաները նախորդ օրվա եղանակը բնութագրեցին, անձրևային, մռայլ, ցրտաշունչ, սառը, ամպամած բառերով, իսկ այօրվա եղանակը՝ գեղեցիկ, արևոտ, ոսկեզօծ, բառերով:

Իմաստի ընկալման փուլ- **այս փուլի նպատակն է սաների** մոտ հետաքրքրության աճի պահպանումը, տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը, նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը: **Թեմայի**

ավելի պատկերավոր և արդյունավետ ուսուցման նպատակով սաների հետ ուղղում եմ հարցերս:

- Տարվա ո՞ր եղանակն է այժմ:
- Եկեք պատմենք, թե ի՞նչ գիտենք աշնան մասին:
- Ինչպիսի՞ն է աշունը:
- Որո՞նք են աշնան ամիսները:
- Ի՞նչ տոներ ենք նշում աշնանը:
- Ի՞նչ բանաստեղծություններ գիտենք աշնան մասին:

Արտասանում են Հ. Թումանյանի «Աշուն» ոտանավորը, երգում «Ջա՛ն, ջա՛ն, աշուն է» երգը: Սաների պատասխանները տարբեր էին ու հետաքրքիր: Սաները ներկայացրեցին, որ աշնանը թռչունները չվում են տաք երկրներ, իսկ նապաստակներն ունենում են ձագեր: Արջերը սարերից իջնում են գյուղ, իսկ սկյուռը պաշար է հավաքում ձմռան համար, գորտերը ծածկվում են տիղմի մեջ կամ թաքնվում ջրամբարի հատակում: Երեխաները նաև նշեցին, որ չվում են ծիծեռնակը, արագիլը, կռունկը, սագերը, սարյակները, իսկ մեզ մոտ մնում են ձմեռելու կաչաղակները, ճնճղուկները, ագռավները:

Հարցնում եմ, թե ի՞նչ բառերով կարող ենք նկարագրել աշունը: Երեխաները նշում են. ոսկեզօծ աշուն, գեղեցիկ աշուն, գունագեղ աշուն, դեղնակարմրավուն աշուն, բերքառատ աշուն, աշնանային տերևաթափ, դեղնած աշուն և այլ բառեր:

Դիդակտիկ խաղ՝ «Գտի՛ր կեսը»

Այս խաղի նպատակն է՝ երեխաների մեջ ամրապնդել բանջարեղենի, մրգերի, դրանց համի, գույների և ձևի մասին պատկերացումները և ասել, թե որ հնչյունով է սկսվում տվյալ մրգի կամ բանջարեղենի անվանումը: Խաղի համար պահանջվող նյութեր՝ քարտի վրա պատկերված մրգերի և բանջարեղենի պատկերներ կիսված վիճակում; Վիվալդիի «Աշուն» ստեղծագործության հնչյունների ներքո երեխաները գտնում են իրենց «կեսին»: Այնուհետև զույգերով ներկայացնում են իրենց միրգը կամ բանջարեղենը;

Այնուհետև երեխաներին բաժանում եմ թղթեր ջրաներկ ու վրձիներ, նկարում ենք մեր սիրելի մրգերը կամ բանջարեղենները:

Կշռադատման փուլ- Այս փուլում իմ հիմնական նպատակն այն է, որ նոր ստացած տեղեկատվությունը սաները կարողանան արտահայտել իրենց բառերով և ձևակերպումներով, նոր գիտելիքները միաձուլել ունեցածին: Նախապես ձևավորված խմբերով ստեղծագործում և պատմում են աշնան մասին: Այս փուլում իմ կողմից տալիս եմ հետևյալ հարցերը.

1.Ինչի՞ մասին էինք զրուցում:

2.Աշունն ի՞նչ բառերով գովերգեցինք:

3.Ի՞նչ նվիրեց մեզ աշունը:

Կազմակերպում ենք ցուցադրություն իրենց նկարներով:

Պարապմունքը լսում էր տնօրենը և մեթոդիստը: Տնօրենը նշել է, որ երեխաները բավականին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել, որի միջոցով էլ հաջողվեց դաստիարակին հասնել իր նպատակին: Մեթոդիստի կարծիքով պարապմունքը ուսուցողական էր և արդիական, իսկ կիրառված մեթոդներն՝ արդյունավետ: Վերջնարդյունքում ձևավորված ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագորական ունակությունները նրանց պետք է գալու ինչպես դպրոցում, այնպես էլ հետագա ամբողջ կյանքի ընթացքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հետազոտական աշխատանքս անցկացնելով ավագ խմբում՝ պարապմունք անցկացնելով «Աշնան բարիքներ» թեմայով, եկա այն եզրահանգման, որ դաստիարակը պետք է կարողանա ճիշտ համակարգել և ընտրել ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնք ավելի արդյուավետ կդարձնեն թեմայի ուսուցումը: Յուրաքանչյուր դաս պետք է նպատակաուղղված լինի ինչպես սաների կրթմանը, այնպես էլ դաստիարակչական նշանակություն պետք է ունենա: Ավագ խմբերի սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը կարևոր նշանակություն ունի հետագայում նրանց զարգացման և կյանքում իրենց սեփական ուղին գտնելու մեջ: Ուսուցման ավանդական և փոխներգործուն մեթոդների համադրումով աշխատանքը, խաղային տեխնոլոգիաների կիրառումը, պարապմունքի ճիշտ նպատակների սահմանումը, վերջնարդյունքների ապահովումը պարապմունքները կդարձնեն հաջողված: Հետազոտության ընթացքը ցույց տվեց, որ ամրապնդվեց երեխաների գիտելիքները, ձևավորվեց ունակություններ իրենց սովորածը վերարտադրելու համար: Կարողացան արդիականացնել թեման, երեխաների մոտ ընդլայնվեց հետաքրքրությունների շրջանակը այլ առարկաների նկատմամբ, նյութն ավելի հեշտ ընկալելի դարձավ:

Հետազոտության ընթացքում բացահայտեցի, որ որոշ սաներ դրսևորել են ինքնուրույնության այնպիսի մակարդակ, որ կարծում եմ հետագայում կազմակերպչական աշխատանքներում կարելի է նրանց ևս ընդգրկել, հատկապես մանկական վիկտորինաների կազմակերպման ժամանակ, սրա վրա էլ հենց պետք է ուշադրություն դարձնեն դաստիարակները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Бабич, О.М., Вьюнова Н.И., Гайдар К.М. Развитие творческих способностей у старших дошкольников / О.М. Бабич – М., 2003. 41с,
2. Кирпач, А. А. Развитие инициативы и самостоятельности детей дошкольного возраста в изобразительной деятельности / А. А. Кирпач. — Текст : непосредственный // Аспекты и тенденции педагогической науки : материалы III Междунар. науч. конф. (г. Санкт-Петербург, декабрь 2017 г.). — Санкт-Петербург : Свое издательство, 2017. — С. 48-50.
3. Парамонова Л.А., Арушанова А.Г., Алиева Т.И. и др. Методические рекомендации по организации образовательной работы с детьми 3-4 лет. / Под ред. Парамоновой Л.А. М.: ОлмаМедиаГрупп, 2015. – 96 с,
4. Рыбкина, О.В. Влияние личностных особенностей детей младшего школьного возраста на школьную мотивацию/ Рыбкина, О.В.// учебнометодический портал - «Педагогический мир» - 2011 – с. 26-29.
5. Сентемова К. С. , Воспитание инициативности у младших Школьников в процессе коллективной Творческой деятельности, Пермь, 2016, 132с., 4с.
6. http://galinamonina.ru/formirovanie-iniciativnostisamostoyatelnosti-otvetstvennosti-doshkolnikov/